նատօլոյ՝ զՀիսմէթի էֆէնտին, էֆէնտոյն մեր պաճանախ։

Կիրակի Ժ–ի Մեծահրաշի. անդ ի տուն էֆէնտուն գնացի ընդ Պէկլէրն շնորհաւորել զմեծութիւն նմին։

Աւուրքս թագաւորն հրաման արար զի մի բանեսցին կամ շինեսցեն չէնս յամենայն քաղաքս, այլ ի վերայ նաւացն պատերազմի եկեսցեն ամենայն ճարտարք և ի հուն հանցեն, զի և ասացին օրերս՝ թէ կրկին այժմ ևս Ֆռանկն գնաւս սոցին աւերեալ է առնելով մի քանի կտոր։

Գշի (12 Մայիս). օլօֆէն ելաւ։

Եշի օրս (14 Մայիս) զմուֆտին փոխեաց թագաւորն, վասն զի տուն չինէր յայսմ ատենի, և թագաւորն անդէն անցեալ և տեսեալ զայն և ի բարկութիւն հարեալ եթէ ես հրաման եմ արարեր որ բնաւ ի քաղաքս ամենայն ոչ մի հիւսն բանի և դու այսչափ բան բանիլ կու տաս. այս պատճառաւ փոխեաց և եդ մուֆտի զՊօլուլուն, որ Ե աւուրքք յառաջ առեալ էր ըզփայէն ուռումէլութեան լրբութեամբ իւրով և մարդելուզէր վէզիրին, քանզի յոյժ սիրեցաւ անտի. եւ վաղվաղակի աճապարելով զայս արարին, որպէս զի լիցին ներքուստ և արտաքուստ միմեանց յոյս։ Եւս և զորդի մուհտուն մանզուլ արարին, որ Ղալաթու մօլլա, և զմուֆտին աքսորեցին ի Ֆիլիպէ։ Եւ մուհտիկն աղաղակէր յամենայն գլուխս շուկայիցն թէ Ամենայն որ ծառայ է թագաւորին՝ պատերազմի պատրաստութիւն տեսցէ իւր, զի թագաւորն հրամայեաց փոյթ ընդ փոյթ։

Ցաւուրս յայսոսիկ պատրաստութիւն ետես Խաչատուր վարդապետն աշակերտ Տեառն Հոհաննու Եդեսացոյ՝ վասն կաթողիկոսութեան Տանն Կիլիկեայ, և ոմանք ի չարեաց առաջնոցն աղմուկս հանեալ չկամե-